

ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԵՎ ԶՈՒԳԱԴԻՐ ԲԱՅԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՔՆՈՍԻ ԼԵԶՎՈՒՄ

Գ. Կ. ԲԱՂԴԻՇՅԱՆ

Սեբեոսի լեզուն, ինչպես ընդհանրապես հայերենը, հարուստ է հարադրավոր բայերով¹: Բավական է ասել, որ պատմիչի լեզվում շուրջ 45 բայեր դարձել են հարադրավոր բայի բաղադրիչներ: Դրանցից են՝ ածեմ, անկանիմ, անցանեմ, առնեմ, առնում, արկանեմ, դառնամ, լինիմ, հարկանեմ, ունիմ և այլն: Օրինակ՝ «Եւ ոչ ինչ էաժ զմտաւ արքայն» (էջ 43)²: «Եւ յարձակեալ Անտոնի՝ ած ապտակ ի ծնաւտ նորա» (էջ 115):

Որոշ բայեր ավելի շատ են հանդես եկել որպես բաղադրիչներ: Այսպես, առնեմ-ը անկախ է կիրառվել 67 անգամ, իսկ որպես հարադրության բաղադրիչ՝ 133: Արկանեմ-ը անկախ է կիրառվել 6 անգամ, իսկ որպես բաղադրիչ՝ 27 և այլն:

Վերն ակնարկված բայական բաղադրիչներով կազմվել են շուրջ 230 հարադրավոր բայեր:

Պատմիչի երկում հարադրավոր բայերը հիմնականում կազմվել են հետևյալ կաղապարներով.

Բայ + հոլովածն — Ածեմ ի հաշտութիւն:

Հոլովածն + բայ — Զմտաւ ածեմ, ի խնդիր անկանիմ, ի միտ անկանիմ, ի նեղ անկանիմ, աղաւթս առնեմ:

Դոյական + բայ — Ապտակ ածեմ, ազդ առնեմ, ամբաստանութիւն առնեմ:

Ածական + բայ — Փախստական անկանիմ, անքակ առնեմ, արժանի առնեմ:

Բայ + բայ (սրանք պատճառական կազմություններ են) — Տամ բերել, տամ մտանել, տամ տանել՝ «Նոյն ժամայն խնդիր արարից խաշին և տաց բերել առ քեզ» (էջ 99): «Ետու տանել զնոսա ի մուտս արևու և յեզր երկրի» (էջ 13):

Սեբեոսի լեզվում նոր վկայված³ հարադրություններից են՝ յինքն առնում,

¹ Հարադրավոր և զուգադիր բայերի հարցի քննության պատմությունը տես Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 21—54, 279—293:

² Բնագրային օրինակները վերցնում ենք հետևյալ հրատարակությունից՝ «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն. բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանոթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց», Երևան, 1939, փակագծերում նշելով էջերը: Նշված հրատարակության հիման վրա մենք կազմել ենք Սեբեոսի «Պատմության» բնագրային համաբարբառը (շուրջ 1320 մեքենագիր էջ), որը հիմք է հանդիսացել հողվածում բերված փաստերի ու վիճակագրական հաշվումների համար:

³ Այստեղ որոշ վերապահում ենք անում: Մենք նոր վկայված հարադրություններ ենք համարում այնպիսիները, որոնք կան Սեբեոսի «Պատմության» մեջ, բայց չենք գտնում «նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ) և «Առձևոն բառարան հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ԱԲ) հայտնի բառարաններում, ինչպես նաև դասական մատենագիրների և Աստվածաշնչի առաջմ հրատարակված հետևյալ համաբարբառներում՝ Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց (բնագրային համաբարբառ), հատ. Ա, Բ, Երևան, 1973: Կորյուն, Վարք Մաշտոցի (բնագրային), Երևան, 1972: Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց (բնա- 12 Հանդես, № 1

ընդ մէջ արկանեմ, ի զգացումն գամ, մխիթարութիւն գործեմ, բամբասանողնեմ, ի բուռն ըմբռնեմ, ի բաց աւերեմ, ի բաց բաժանեմ, բարձումն լինի, յարձակումն լինի, յաղթութիւն գործեմ, գործ պատերազմի ունիմ, զառաջևա ունիմ, շու յուղի անկանիմ, ի թափ անցուցանեմ, ամբաստանութիւն առնեմ, այրընտիր առնեմ, անձեռտ առնեմ, դարանակալ առնեմ, ի միջի առնեմ, կռիւ առնեմ, հաւանութիւն առնեմ, յաքսորս առնեմ, յաքսորս արկանեմ, շրջափակ առնեմ, չաքախաւսութիւն առնեմ, տապալաւառն առնեմ, ձերբակալ լինիմ, ուխտ ունիմ, աւար վարեմ, դարձ տամ, հարկանել տամ, տամ առնել, տամ մտանել:

Որոշ հարադրությունների համար ՆԶԲ-ն վկայություններ է բերում Սեբեոսից ավելի ուշ ապրած հեղինակներից: Օրինակ, լուծումն լինի-ի համար վկայություն է բերում Հովհաննես Դրասխանակերտցուց (X դար)՝ «լուծումն ինձ ի կապարանէն լիցի»⁴: Այսպես էլ՝ ժամ առնեմ-ի համար վկայություն է բերում միայն Լամբրոնացուց (XII դար)՝ «Տես, զի ոչ ասէ, թէ տուր զի քեզ ժամ առնէ»⁵:

Ա. Մարգարյանը գրում է. «Հայ հին գրական լեզվի հարադրավոր բայերի զննությունը ցույց է տալիս, որ նրանց մեծագույն մասը կազմված է առնել (>անել), լինել, առնուլ (>առնել), այլև դնել, տալ բայերի և դրանց մեջ էլ հատկապես առաջին երկուսի միջոցով»⁶: Այս դիտողությունը միանգամայն բնորոշ է նաև Սեբեոսի լեզվին: Ասենք, սակայն, որ պատմիչի երկում ամենից գործածականը առնեմ բայն է, որով կազմվել են շուրջ 50 հարադրավոր բայեր:

Ուսումնասիրվող հեղինակի գործածած բոլոր հարադրավոր բայերի մեջ ամենից շատ հանդես է եկել հրաման տամ-ը (մոտ 50 անգամ):

Հարադրավոր բայերի մի զգալի մասը դարձվածքի արժեք ունի:

Քիչ հանգամանորեն խոսենք հարադրավոր այն բայերի մասին, որոնց մի բաղադրիչը տամ բայն է: Սեբեոսի լեզվում տամ-ը նշված կիրառությամբ մեծ հաճախականություն ունի: Սակայն անվան հետ շուրջ 5 անգամ ավելի շատ է գործածվել, քան բայի: Ուշագրավ է այն, որ անվան հետ շատ է գործածվել ետադաս՝ 77 անգամ (իսկ նախադաս՝ 8): Սրան հակառակ տամ-ը բայի անորոշ դերբայի հետ ավելի շատ գործածվել է նախադաս՝ 15 անգամ (իսկ ետադաս՝ 2): Բերենք օրինակներ.

Անվան հետ. նախադաս՝ «Ետ նալաւ ընդ Մաքսիմիանոսի» (էջ 133): «Գայ հասանէ ի դաշտն Արայի, և տալ պատերազմ ընդ Արայի» (էջ 6): Ետա-

գրային), Երևան, 1972: Ե դ ի շ ե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (բառա-քերականական), Երևան, 1972: «Փաստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց» (բնագրային), գիրք I, Ա—Ժ, Երևան, 1974: «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց» (բառա-քերականական), Երևան, 1972: «Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան» (բառա-քերականական համարարառ), Երևան, 1972: Թ ա գ և ո ս Ա ս տ վ ա ծ ա տ ր յ ա ն, Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1895: Քանի որ առայժմ չունենք գասական գրաբարը ներկայացնող ինքնուրույն ու թարգմանական գրականության բոլոր աղբյուրների համարարառները, ուստի հնարավոր է ենթադրել, որ որպես նոր վկայված հարադրություններից մեկը կամ մի քանիսը գործածված լինեն նաև Սեբեոսից առաջ ապրած այլ հեղինակների գործերում:

⁴ ՆԶԲ, հատ. I, էջ 895:

⁵ Նույն տեղում, էջ 826:

⁶ Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 83:

դաս՝ «ևսոյս ետ Հայկն յիրեսաց նորա» (էջ 45): «Հրաման ուալ խիստ սաստիւ» (էջ 25):

Բայի հետ. նախադաս՝ «Վասն հաւատոյ գիր ետ առնել» (էջ 145): «Տալ տանել նմա երդումն» (էջ 97): Ետադաս՝ «Զմեզ վստահացուցին և զզարսն նապաղել ետուն յասպատակ յԱտրպատական» (էջ 141): «Զնոսա ածին ի վերայ մեր յանկարծակի և հարկանել ետուն զմեզ» (էջ 141):

Աստվածաշնչում տամ բայն իբրև հարադրավոր բայի բաղադրիչ համեմատաբար սակավ գործածություն ունի: Այդպիսի կիրառությամբ այն հանդես է եկել շուրջ 50 անգամ⁷, որի ճնշող մեծամասնությունը բալ + աճուռ ղերբայ կառուցվածքով: Օրինակ՝ «Հօրն իւրում ետ տանել նոյնպէս» (Մենդ., հե, 25): «Ես ետու տանել զուլդ» (Մենդ., ԼԸ, 25): Աստվածաշնչում ոչ մի օրինակ չունի, որի մեջ տամ բայը ետադաս կիրառություն ունենա, իսկ Սեբեոսը, ինչպես տեսանք, այդպիսի երկու վկայություն ունի: Բալ + տամ կառուցվածքը, հետագա դարերում ավելի տարածվելով դրական լեզվում, տիրապետող դարձավ: Ժամանակակից գրական հայերենում արդեն միակ կադապարն է՝ գրել տալ, վազել տալ և այլն: Մյուս կողմից՝ եթե Աստվածաշնչում տամ բայը գերազանցապես բայի հետ է հարադրվում, ապա Սեբեոսի լեզվում՝ անվան:

Անվանական բաղադրիչով որոշ հարադրավոր բայեր Սեբեոսի լեզվում մեծ կիրառություն ունեն: Նրանց մեջ կան այնպիսիները, որոնցում բայը դրվում է ղլխավորապես ետադաս: Օրինակ, հրաման տամ-ը գործածված է 53 անգամ, որից միայն մի երկու կիրառությունում է բայը նախադաս՝ «Զաւրացն կողմանցն այնոցիկ ետ հրաման» (էջ 142): «Ոչ կարաց տալ հրաման» (էջ 45): Մնացած դեպքերում բայը միշտ ետադաս է: Օրինակ՝ «Եւ սկսաւ կալսրն հրաման տալ» (էջ 49): Պատմիչն ունի մի վկայություն միայն, ուր տամ բայը դրվել է արդեն իսկ հարադրավոր բայի վրա՝ «Կանգնեաց զպատկերն իւր, և ետ երկիր պագանել իբրև աստուծոյ» (էջ 4):

Ինչպես տեսնում ենք, բալ + տամ կառուցվածքում հարադրավոր բայերը համեմատաբար արնքան էլ մեծ կիրառություն չունեն Սեբեոսի լեզվում: Ինչ վերաբերում է այն հարցին, թե տամ բային ի՞նչ սեռի բալ է հարադրվում, ժամանակակից հայերենի կապակցությամբ Ա. Ա. Աբրահամյանը գրում է. «Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորաբար ժամանակակից գրական հայերենում պատճառական-միջնորդական քերականական իմաստի արտահայտման համար տալ բայը այսօրինակ հարադրությունների մեջ հիմնականում հանդես է գալիս ներգործական սեռի բայերի հետ: Զեզոք սեռի սկզբնատիպ բայերը այս դեպքում տալ բայի հարադրությամբ հանդես են գալիս շատ սակավ գործածությամբ»⁸: Պետք է ասել, որ այս զնահատականը ճիշտ է ոչ միայն ժամանակակից գրական արևելահայերենի, այլև հայերենի համար ընդհանրապես: Մասնավորապես Սեբեոսը տամ բայն այսպիսի կիրառությամբ գործածել է 7 բայի հետ, որոնցից 4-ը ներգործական սեռի են,

⁷ Աստվածաշնչի, ինչպես նաև Եզեկի, Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի լեզվի վերաբերյալ արված վիճակագրությունները կամ այդ աղբյուրներից բնագրային վկայությունները տրվում են ըստ նշված համադրարանների (տե՛ս. Ժան. 3):

⁸ Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1. Երևան, 1962, էջ 553:

1-ը՝ չեզոք (մտանել տամ), մեկի դիմաց էլ ՆՀԲ-ն⁹ նշում է և՛ ներգործական, և՛ կրավորական, և՛ չեզոք (նապաղել տամ), իսկ մեկն արդեն ինքն է հարադրավոր (ներկիր պագանել տամ): Ասենք նաև, որ ողջ Աստվածաշնչում տամ բայը դրվել է ընդամենը 4 չեզոք սեռի բայի հետ: Օրինակ՝ «Ոչ ետուն բարձրանալ եղջերն» (Ա. Մակ., Բ, 48): «Նա տալ նմա շնալ» (Մատթ., Ե, 33):

Եթե նկատի չառնենք այն հարադրավոր բայերը, որոնք այնպիսի դարձվածքի արժեք ունեն, որի արտահայտած իմաստը հնարավոր չէ արտահայտել մեկ բայով, կարելի է ասել, որ պատմիչի լեզվում եղած գրեթե բոլոր հարադրավոր բայերն էլ ունեն իրենց ոչ հարադրավոր բայազույգը: Սակայն Սեբեոսի լեզվում կան հարադրություններ, որոնց արտահայտած իմաստը և՛ պատմիչի երկում, և՛ դրաբարում համադրական համանիշով շատ սակավ է արտահայտվում: Բացի սրանից, միևնույն համադրական բայի իմաստը երբեմն կարող է արտահայտվել մեկից ավելի հարադրավոր բայերով: Օրինակ՝ պատասխանեմ-պատասխանի առնեմ-պատասխանի տամ: Պատասխանեմ բայը վերը հիշատակված հեղինակները չունեն, իսկ Սեբեոսի երկում այն հանդիպում է ընդամենը մեկ անգամ՝ «Նոքա պատասխանեալ նմա զանց արարին զնովա և զնացին» (էջ 112): Սրան հակառակ, պատասխանի առնեմ, պատասխանի տամ-ը հաճախակի են գործածված: Օրինակ՝ Պատասխանի ետ թագաւորն և ասէ» (էջ 124): «Հաճոյ թուեցաւ ամենեցուն առնել թղթոյն պատասխանի» (էջ 121):

Կան նաև հարադրավոր բայեր, որոնց համադրական զույգը դասական դրաբարում շատ սովորական ու տարածված գործածություն ունի, բայց Սեբեոսը նրա փոխարեն գործածում է միայն հարադրավոր ձևը: Օրինակ՝ ողորմիմ-ը դասական դրաբարում շատ գործածական բայերից է, սակայն Սեբեոսի հեղինակային լեզվում «ողորմել» իմաստն արտահայտվում է միայն ողորմութիւն առնեմ||առնեմ ողորմութիւն հարադրությամբ: Օրինակ՝ «Երդմնեցուցանէ զորդի իւրառնել ողորմութիւն ի վերայ ամենայն յանցաւորացն» (էջ 109): «Առաւ ի վերայ նորա ողորմութիւն» (էջ 91): Այս տեսակետից պատմիչն առանձնանում է հիշատակված այլ հեղինակներից, որոնցից միայն Եզնիկի լեզվում ենք գտնում մի վկայություն առնեմ ողորմութիւն-ով՝ «Ապա առաքեալ, զի ի վերայ ամենեցուն առնէր ողորմութիւն» (էջ 274):

Սեբեոսի լեզվում գոյություն ունեն հարադրություններ, որոնց համադրական զույգն ընդհանրապես չկա նրա երկում: Այսպես, շրջափակեմ բայը V դարի գրականության մեջ սակավ է կիրառված: Այն չունի նաև Սեբեոսը, բայց դրա դիմաց գործածել է շրջափակ առնեմ-ը: Օրինակ՝ «Եւ զմնացեալսն շրջափակ աւարեալ՝ կամէին զամենեսեան սատակել» (էջ 95):

Սեբեոսը գործածել է նաև այնպիսի հարադրավոր բայ, որի համադրական բայազույգը դրաբարն ընդհանրապես չունի (հետևաբար, չէր էլ կարող ունենալ մեր պատմիչը): Այսպես, նա ունի ապտակ ածեմ¹⁰ հարադրությունը, բայց դասական դրաբարը չունի ապտակեմ. «Եւ յարձակեալ Անտոնի՝ ած ապտակ ի ծնաւտ նորա» (էջ 115): Ի դեպ, այս հարադրությունը սակավ է գործածվում, այն չի հանդիպում դասական մի շարք հեղինակների գործերում: Հարկ է նշել նաև, որ որոշ համկացություններ արտահայտված են ոչ թե պարզ

⁹ ՆՀԲ, հատ. 11, էջ 172:

¹⁰ Իհարկե, նման հարադրություններ կան նաև դասական դրաբարում:

կամ հարադրավոր բայերով, այլ նկարագրական եղանակով: Օրինակ՝ «հիվանդանալ» իմաստի համար պատմիչը շունի հիւանդանամ-ը և ոչ էլ որևէ հարադրավոր բայ: Այս իմաստը Սեբեոսն արտահայտել է հետևյալ կերպ. «Արդ՝ մինչդեռ գայր հրովարտակն և պատին առնել զնա կիրապաղատ՝ յանկարծակի եհաւ նմա հիւանդութիւն և մեռաւ» (էջ 117):

Հարադրավորների նման բավական լայն գործածություն ունեն նաև հարադրավորների տարատեսակ հանդիսացող զուգադրական բայերը: Ինչպես առհասարակ հայերենում, այնպես էլ Սեբեոսի լեզվում անհամեմատ շատ են երկբաղադրիչ զուգադրական բայերը, որոնց մեջ որպես առաջին բաղադրիչ գործածվել են անցանք, առնում, ասպատակում, արշաւում, բորբոքում, գամ, զնամ, գումարում, դադարում, դառնում, դիմում, ելանում, երթում, զետեղում, զերծանիւմ, զուարճանում, ժողովում, լնում, լքանում, խաղում, ծագում, կադմում, կառափնատում, կարգում, կոտորում, հանում, հատանում, հարկանում, դաւում, ճեպում, մեկնում, մտանում, յառնում, յաւում, նուաճում, շարժում, ունիւմ, շունում, պատառում, պատում, սփռում, տանիւմ, փախչիւմ, փոթորկում, փութում, քակում, քանդում և այլ բայեր: Օրինակ՝ ԿԱՅ հասանէ յերկիրն Արարադայ» (էջ 4): «Եւս ահագին ԴԻՄԵԱԼ յարձակեցան ի վերայ նորա» (էջ 71): «Ինքն իսկ արքայն Քուշանաց ԽԱՂԱՅԵԱԼ զնայր ի վերայ զարու մեծաւ» (էջ 26): «ՉՈԳԱՆ ամբացան ի Զարեհաւանի» (էջ 152): «Եւ այնպէս ՔԱԿԵԱԼ պատառնաց զնոսա ի Հոռոմոց նեոին արբանեակն» (էջ 141):

Երկբաղադրիչ զուգադրական բայերի մեջ որպես երկրորդ անգամ հանդես են եկել ածեմ, ամբանում, անկանիւմ, անցանում, ասում, արձակում, աւարում, բաժանում, բանակում, բնակում, գամ, գնում, գումարում, գնում, ելանում, զինում, զուարթանում, ընտրում, թաղում, թափում, ժողովում, իմանում, իջանում, խընդում, կամ, կապում, կարգում, հանդիպում, հաղորդում, հասանում, հաստատում, հարկանում, հեռանում, հնազանդում, հոսում, հրդեհում, ձմերում, մատուցանում, մեկնում, մերձենում, միաբանում, մտանում, յանգուցանում, յարձակում, նուազում, նուաճում, նստում, ունիւմ, սատակում, սեռում, սպանանում, սպառում, սփռում, վանում, պաշարում, պատառում, պատրաստում, տարածանում, տեսանում, փայլակնանում, քակում և այլ բայեր: Ահա վկայություններ՝ «գալ շԱՍԱՆԵ՛ ի դաշտն Արայի» (էջ 6): «Յայնժամ զարացն Իսմայելիերբեալ ՊԱՇԱՐԵՑԻՆ զՏիգրոն» (էջ 108): «Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր և շոգաւ ԿԱԼԱԻ Հայկն զերկիրն Արարադայ» (էջ 5):

Սեբեոսի լեզվում համեմատաբար սակավ են այն բայերը, որոնք տարբեր զուգադրական բայերում հանդես են գալիս և՛ որպես առաջին, և՛ որպես երկրորդ բաղադրիչ: Պատմիչի երկում այդպիսի բայերից են՝ անցանում, գամ, զնամ, գումարում, ժողովում, կարգում, հարկանում, մեկնում, մտանում, ունիւմ, պատառում, սփռում: Օրինակ՝ «Զարացեալ զարն Պարսից՝ ԱՆՅԵԱԼ կալաւ զՏարսաւն քաղաք» (էջ 82): «Ելին յանկարծակի և զնացին ԱՆՅԻՆ զգետովն» (էջ 152): «Իսկ այն զարն... առ զարար և զգերութիւն, և եկն լանց ի նախճաւան» (էջ 120): «Եւ դարձաւ եկն անդրէն ի զարս Հայոց» (էջ 116):

Բոլոր բայերը չեն, որ կարող են հարադրվել և զուգադրական բայեր կադմել: Բացի սրանից, բոլոր զուգադրական բայերը չեն, որ հեղինակի լեզվում մեծ գործածություն ունեն: Երկբաղադրիչ զուգադրական բայերի մեջ որպես

առաջին բաղադրիչ ամենից շատ հանդես է գալիս երբամ¹¹ բայը: Երանով կազմվել է շուրջ 40 զուգադրական բայ: Այս առումով աչքի ընկնող երկրորդ բայը գամ-ն է, որով կազմվել է մոտ 20՝ զուգադրական բայ: Օրինակ՝ «Եւ եր-
թեալ զաղաւթեաց ի Տայս» (էջ 146): «Դիմեալ զայ Բէլ արթայ ի վերայ քո, և
եկն եհաս մինչ ի տուն անդր» (էջ 4):

Բացի երբամ, գնամ բայերից իբրև առաջին բաղադրիչ լայնորեն են դուր-
ծածվում նաև՝ դիմեմ, գումարեմ, առնում, դառնամ, տանիմ, չուեմ, ապա՝
հարկանեմ, մեկնեմ, լառնեմ, ելանեմ բայերը:

Սերեոսի լեզվում երկբաղադրիչ զուգադրական բայերի մեջ որպես երկ-
րորդ բաղադրիչ հատկապես գործածվել է գնամ-ը, որը հանդես է եկել շուրջ
35 զուգադրական բայերում, ապա՝ հաւանեմ-ը՝ մոտ 15 զուգադրական բայե-
րում: Օրինակ՝ «Գումարէ և այլ զարս բազումս յաւանականութիւն իւր, և
դիմեալ ԳնԱՅՐ ի վերայ աղգին քուշանաց» (էջ 67): «Չուեցին ամենայն զար-
քըն ի տեղուդէն յայնմանէ, և երթեալ ՀԱՍԱՆԷԻՆ յամուրս աշխարհի
իւրեանց» (էջ 64):

Իբրև երկրորդ բաղադրիչ համեմատաբար շատ են գործածված նաև
անցանեմ, դաղարեմ, բնակիմ, ունիմ, ժողովեմ, հատիմ, տաշարեմ, սատա-
կեմ բայերը:

Դասական գրաբարում նշված դիրքով կիրառության զգալի հաճախա-
կանություն ունի կամ-ը, որը Սերեոսի լեզվում որպես զուգադրական բայի
երկրորդ բաղադրիչ հանդիպում է ընդամենը 5 անգամ: Օրինակ՝ «Խնդրեցին
երդումն և պայման և եկին կացին առաջի Սմբատայ» (էջ 64): «Բայց ե՛րբ
կա ց ուր և հրամայեցից քեզ» (էջ 104):

Պատմիչի լեզվում երկբաղադրիչ կառուցվածքի զուգադրական բայերի
առաջին բաղադրիչը շուրջ 60 տոկոսով դրված է անցյալ դերբայով: Այս կար-
գի զուգադրական բայերում երկրորդ բաղադրիչը գրեթե միշտ դիմավոր
բայ է: Չափազանց հազվադեպ է, երբ նախադաս բաղադրիչը դիմավոր
բայ է, իսկ ետադասը՝ անցյալ դերբայ: Օրինակ՝ «Բայց զահագին աղէտս
հէնին Խամայելի, որ բորբոնեաց հրդեհեալ զծով և զցամաք, ո՞վ կարիցէ
պատմել» (էջ 114):

Սերեոսի երկում աննշան կիրառություն ունեն նաև երկու բաղադրիչ-
ներն էլ անցյալ դերբայով կազմված զուգադրական բայերը: Օրինակ՝ «Ջսուլի
իսկ մորիկ ի վերայ Բաբելովնի տեսանի, այլ եկեալ հասեալ ի վերայ ամե-
նայն երկրի» (էջ 138):

Հանդիպում է նաև մի երկու վկայություն, ուր զուգադրական բայի առա-
ջին բաղադրիչը անցյալ դերբայ է, երկրորդը՝ անցյալ դերբայ + օժանդակ
բայ կառուցվածքով բաղադրյալ ժամանակաձև: Իհարկե, այսպիսի զուգա-
դիր բայերում փաստորեն երկու վաղակատար-հարակատար ժամանակաձևեր

¹¹ Ի դեպ, «գնալ» իմաստը դասական հայերենում և Սերեոսի լեզվում արտահայտվում է
հատկապես գնամ, երբամ համանիշ բառերով: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ դասա-
կան հայերենում ավելի շատ է գործածվում երբամ-ը: Կորյունը, օրինակ, գնամ-ը կիրառել է
6 անգամ, երբամ-ը՝ 7, Եղնիկը՝ գնամ-ը՝ 22 անգամ, երբամ-ը՝ 23, Ազաթանգեղոսը՝ գնամ-ը՝
43 անգամ, երբամ-ը՝ 53, Բուղանդը՝ երբամ-ը՝ 162 անգամ, իսկ գնամ-ը՝ 124: Սերեոսի լեզ-
վում ճիշտ հակառակն է: Պատմիչի երկում գնամ-ը գործածվել է 252 անգամ, իսկ երբամ-ը՝
118: Հայտնի է, որ գրական արևելահայերենում երբամ և գնամ բայերից անհամեմատ շատ է
գործածվում գնամ-ը, մինչդեռ արևմտահայերենում առավել շատ գործածականը երբամ բայն է:

էն, բայց օժանդակ բայը դրվում է միայն դերբայներից մեկի մոտ: Օրինակ՝ «Մի՛ այնուհետև ողբասցէ Սիւան, և մի՛ զղեցցի սուգ Երուսաղէմ, քանզի աւագիկ եկեալ հասեալ է արքայն» (էջ 88): «Իսկ Անտիոքոս իբրև ետես, զի անշափ բազմութեամբ եկեալ հասեալ էր ի վերայ նորա Արշակ արքայն Պարթևաց... խոյս ետ յերեսաց նորա» (էջ 8):

Ուսումնասիրվող երկում հանդիպող երկբաղադրիչ զուգադրական բայերի շուրջ 40 տոկոսի մեջ երկու բաղադրիչներն էլ դիմավոր բայեր են՝ դրբաված նույն ժամանակով, դեմքով, թվով: Օրինակ՝ «Կապէ զնա Արշակ արքայ ոտիւք և ձեռաւք, և առնու զնայ յարևելս» (էջ 3): «Ետուն նմա ինչս և արձակեցին անդրէն ի տեղի իւր, և եկն դադարեաց ի Տայս» (էջ 158): «Եկն եկաց առաջի նորա սուրհանդակն և ասաց նմա ողջոյն» (էջ 43)¹²: Հանդիպում են միայն երեք-չորս վկայութիւն, երբ զուգադրական բայի երկու բաղադրիչներն էլ հրամայական բայաձևեր են: Օրինակ՝ «Ն՛րք զնա՛ խաղաղութեամբ յերկիր քոյ» (էջ 107): «Ն՛րք կա՛լ զտեղին քոյ» (էջ 115): «Միայն սիրեցէ՛ք զԱստուածն Աբրահամու և Երա՛յի կալաւո՛ւմ գերկիրն ձեր» (էջ 106):

Եռաբաղադրիչ զուգադրական բայերը ինչպես հայերենի բոլոր դրսևորումներում, այնպես էլ Սեբեոսի լեզվում սակավ գործածութիւն ունեն: Օրինակ՝ «Ձուեաց խաղաց զնաց Հայկն ի Բաբելոնէ կնան և որդւովքն և ամենայն աղխին հանդերձ» (էջ 3): «Պատեալ պաշարեալ պահէին զքաղաքն Դրնայ» (էջ 35):

Հանդիպում են մոտ մեկ տասնյակի հասնող այնպիսի զուգադրական բայեր, որոնց մի բաղադրիչը հարադրավոր բայ է: Օրինակ՝ «Ջբազումս վանեցին հրով, և զբազումս փախստական արարել հալածեցին» (էջ 120): «Մտադրութեամբ և ամենայն հնազանդութեամբ չու յուղի անկեալ զնացին» (էջ 38): «Հասեալ ի Միջագետս Ասորոց, պատեալ պաշարեն զՈւռայ քաղաք, և մարտ եղեալ կռուի ընդ նմա» (էջ 77): Ամենից շատ հանդիպում է «մարտ ղնեմ կռուիմ» զուգադրական բայը: Երբեմն պատահում է, որ զուգադրական բայն ունենում է հարադրավոր բայ + 2 դիմավոր բայ կառուցվածքը: Օրինակ՝ «Արդ՝ առեալ ապստամբին միհրացելոյն զզարս իւր, զփիղս և զամենայն զգանձս թագաւորական, չու արարեալ զնայ հասանլ¹³ յԱտրպատական» (էջ 88):

Սեբեոսի երկում երկու հարադրավոր բայեր շատ հազվադեպ են զուգադրվում: Օրինակ՝ «Սպանին զզարավարն ի պատերազմին, և զմնացեալոն փախստական արարեալ հալածական տանէին» (էջ 63):

Ընդհանուր առմամբ, զուգադրական բայերի բաղադրիչներն անմիջապես հաջորդում են միմյանց: Գրաբարում, Սեբեոսի լեզվում և ընդհանրապես հայերենի մյուս դրսևորումներում համեմատաբար քիչ են այն վկայութիւնները, որոնցում առկա է բաղադրիչների հեռացում: Օրինակ՝ «Ի մէջ երկուց ճակատուցն մարտ եղեալ ընդ միմեանս կռուէին» (էջ 68):

Հնարավոր է, որ որոշ իմաստներ արտահայտվեն և՛ երկբաղադրիչ, և՛ եռաբաղադրիչ կառուցվածքի զուգադրական բայերով: Ստորև իբրև ապա-

¹² Սեբեոսն ունի և շաղկապով կապակցված օրինակներ ևս. «Եւ մինչ կամէին զնոսա սրով սատակել՝ եկն այրն և եկաց յանդիման» (էջ 112):

¹³ Քանի որ այստեղ (և նման դեպքերում) դիմավոր բայերն անջատված չեն ստորակետով, թերևս հնարավոր է նաև երկու բայերը միասին դիտել որպես մեկ զուգադրական բայ:

ցույց բերում ենք «գնալ» իմաստը, որովհետև այն հետաքրքրում է մեզ նաև այլ կողմերով.

Երկրադարիչ կառուցվածքով. «Խաղալ գնալ Արշակ ի Բաբելոն» (էջ 9): Նկատելի է հետևյալը. Կորյունի, Բուզանդի, Ազաթանգեղոսի լեզվում գնամ բայի մոտ բացարձակ գերակշռությամբ դրվում է խաղալ բայը: Օրինակ՝ «Խաղալու գնալու ի հինգերորդ ամի Վոամշապհոյ արքային Հալոց» (Կոր. 46): «Խաղալու գնալու ճեպով իշխանն արքային Պարսից» (Բուզ. 46): «Խաղալու գնալու ամենայն զօրօքն հանդերձ» (Ազաթ., 404): Սեբեոսի լեզվում երկրադարիչ կառուցվածքում մեծ մասամբ գործածվում է շուեմ բայը: Օրինակ՝ «Եւ ինքն շուեաց գնաց անտի ևս ի հիւսիսակողմն» (էջ 3): «Չուեաց գնաց Երակոս ճի հազարաւ» (էջ 93): Եռադարիչ կառուցվածքով. «Չուեաց խաղաց գնաց Հայկն ի Բաբելոնէ կնան և որդւովքն» (էջ 3): Ինչպես տեսնում ենք, այս կառուցվածքում ևս պատմիչը գործածում է շուեմ-ը, որի այսպիսի կիրառության չենք հանդիպում վերը նշված հեղինակների գործերում եղած նաև եռադարիչ կառուցվածքներում: Բուզանդի, Ազաթանգեղոսի լեզվում գտնում ենք երթամ-ի կիրառությունը: Օրինակ՝ «Խաղալու գնալու երթալ» (Ազաթ. 403): «Խաղալու գնալու երթալ իջանէր ի դաշտն այրարատեան գաւառին» (Բուզ. 15): Ուրեմն, բավական ակնհայտ է Սեբեոսի նախասիրությունը շուեմ բայի գործածության հարցում:

Սեբեոսի երկում նշված երկու կառուցվածքներում էլ գնամ բայը միշտ վերջադաս է (մեծ մասամբ այդպես է նաև V դարի մատենագրության մեջ): Խիստ հազվագեպ է նշված սկզբունքի խախտումը: Օրինակ՝ «Եւ յետ հանգրստեան սրբոյն ներսիսի գնաց չոգաւ ի գաւառն Կորդուաց» (Բուզ. 185): Նախադասության մտքի շարունակության մեջ Սեբեոսի թե՛ երկբաղադրիչ, թե՛ եռադարիչ կառուցվածքներին հաջորդող առաջին իսկ բայը գերազանցապես երթամ-ն է՝ դրված հատկապես անցյալ կատարյալ ժամանակով: Օրինակ՝ «Եւ ինքն շուեաց գնաց անտի ևս ի հիւսիսակողմն և չոգաւ բնակեցաւ ի բարձրաւանդ դաշտավայրի միոջ» (էջ 3): «Ձի շուեաց խաղաց գնաց Հայկն ի Բաբելոնէ կնան և որդւովքն և ամենայն աղիսին հանդերձ, և չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ» (էջ 3):

Սեբեոսի գործածած հարադրավոր և զուգադիր բայերի քննությունը ցույց է տալիս, որ այդ բայերը յուրօրինակ թարմություն ու հնչեղություն են հաղորդում պատմիչի ոճին և ծառայում են որպես միջոց զանազան իմաստային նրբերանգների արտահայտման, հեղինակի լեզվի ոճավորման համար:

Պատմիչի երկում գոյություն ունեցող հարադրավոր և զուգադիր բայերի կաղապարները անձանոթ չեն դասական զրաբարին և գործածական են ողջ հին գրական հայերենում: Սա նշանակում է, թե լեզվական-քերականական կաղապարները հեշտությամբ ու մի անգամից ո՛չ ծնվում են, ո՛չ էլ արագ կերպով դուրս են գալիս լեզվից: Սրանով հանդերձ, Սեբեոսի լեզուն հետաքրքրություն է ներկայացնում թե՛ արդեն իսկ եղած կաղապարներով նոր հարադրությունների կազմությամբ, թե՛ որոշ հարադրավոր ու զուգադիր բայերի ու նրանց կաղապարների կիրառության նախասիրություններով, այլ հեղինակներից ունեցած տարբերություններով: Դրանով իսկ նրա «Պատմությունը» մի կարևոր և հավաստի աղբյուր է զրաբարի հարադրավոր և զուգադիր բայերի գործածությունների ուսումնասիրման, նրանց ոճական արժեքի գնա-

հատման, ինչպես նաև հայոց լեզվի զարգացման հետագա շրջաններում տարածված որոշ հարադրավոր ու զուգահր բայերի ու օրինաչափությունների աղբյուրների բացահայտման համար:

УПОТРЕБЛЕНИЕ АНАЛИТИЧЕСКИХ И СОПОСТАВИТЕЛЬНЫХ ГЛАГОЛОВ В ЯЗЫКЕ СЕБЕОСА

Г. К. БАГДИШЯН

(Резюме)

Употребление аналитических и сопоставительных глаголов придает своеобразие языку и стилю «Истории» армянского автора VII в. Себеоса и является важным средством выражения различных смысловых оттенков. Модели этих глаголов, встречающиеся в труде историка, известны классическому древнеармянскому языку. Несмотря на это, язык Себеоса представляет большой интерес как образованием новых глагольных форм на основе имеющихся моделей, так и тем, что, в отличие от других авторов, предпочтение отдается употреблению форм аналитических и сопоставительных глаголов.

Труд Себеоса является важным источником для исследования древнеармянских аналитических и сопоставительных глаголов, для оценки их стилистических особенностей, а также для выяснения и истолкования истоков некоторых закономерностей, имевших место в последующий период развития армянского языка.